№ 220 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9 1904 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9 № 220

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, հոկտեմբերի 10-ին

ՆԱԽԱՍԱՐԴ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԶՕՐԻԵԱՆՑԻ

մահվան քառասնօրեայ պատարագ կը մատուցվի և ապա հոգեհանգիստ Հաւլաբարի Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցում, որի մասին հանգուցեալի այրին Եփեմիա Սարգսեան Զօրիեանցը իր զաւակների յետ յայտնում է ազգականներին և բարեկամներին։ Պատարագի սկիզբը 10¹/₂ ժամին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարտաւորութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընկերական ոգով. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Անգլիական սպիտակ գիրքը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հէյդար-Շահ։

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ համար կատարելապէս հասկանալի է այն մեծ յարգանքը, որ ունէին փորձված անձինք մեր անցեալ կեանքում։ Կրթական հիմնարկութիւններ չը կային, իսկ եղածները տալիս էին միայն գրագիտութիւն և հաղորդում մի քանի քերականական գիտելիքներ։ Կեանքի հարցեր, կեանքին վերաբերեալ ուսմունքներ բացակայում էին դպրոցում, ուստի և մարդիկ ստիպված էին ամեն բան սովորել փորձառութեամբ, կեանքի պայմանների հետ շփվելով և ընդհարվելով։ Չը կար մամուլ, չը կային գրքեր, որոնք նպաստէին մարդկանց մտաւոր պաշարի ընդարձակման և հերթական հարցերի քննութեան։ Առօրեայ կեանքը իր չար ու բարի հանգամանքներով կազմում էր մարդկանց համար այն դպրոցը, որտեղ և կազմակերպվում էր նրանց համայնական գործերի ղեկավարող միտքը։

Այդպէս է իրերի դրութիւնը նոյն իսկ մինչև այժմ այն տեղերում, ուր դեռ շարունակվում են հին կարգեր, ուր դեռ նորագոյն քաղաքակրթութիւնը մուտք չէ գործել։ Այդպէս է մեր գիւղերից շատերում, այդպէս է մեր հարևան Պարսկաստանի և Թիւրքիայի ընդարձակ տարածութիւնների վրա։ Սակայն այն ժամանակ, երբ այդ քնած և թմրած տեղերում շարունակվում է հին դրութիւնը, կեանքի արտաքին պայմանները այնպիսի խոր և մեծ փոփոխութիւնների են ենթարկվում, որ այլ ևս անկարելի է ապահովել ժողովրդական մասսաները նրա հին, վաղեմի, դանդաղ մտածողութեան եղանակներով և պէտք է զգացվում աւելի ուժեղ գործօնների, քան կեանքի սեփական փորձառութիւնն է իր ցուցումներով։ Պէտք է զգացվում և ուրիշ ազգերի, աւելի առաջ գնացած հասարակութիւնների փորձառութեան ցուցումներին։ Երևան է գալիս պահանջ և անհրաժեշտութիւն ուսումնասիրելու այն բոլորը, ինչ որ ամբարել է քաղաքակրթութիւնը մարդկանց կեանքի բարեփոխութեան համար։

Մենք ևս այս պահանջի և անհրաժեշտութեան հրամայողական ձայնը սկսել ենք լսել և զգում ենք, որ պէտք է ժողովրդական մասսաներին տալ գիտութիւն, տալ հեղինակաւոր ցուցումներ։ Սակայն շատ քիչ միջոցներ ենք գործ դրել բաւարարութիւն տալու ժողովրդական մասսային։

Հարկաւոր է ժողովրդին գիրք՝ իսկ մենք շատ քիչ գիրք ենք տարածել նրա խաւերում. հարկաւոր է նոր արհեստ՝ մենք չենք սովորեցրել. հարկաւոր է կրթութիւն՝ մենք չենք տուել այն չափով, որ անհրաժեշտ է. հարկաւոր է ղեկավարող գործունէութիւն բարձրացնելու նրա մտաւոր և բարոյական վիճակը՝ մենք այդ չենք արել. կամ աւելի ճիշդն ասած, չենք կատարել այն չափով, որ կարողանայինք յուսալ խոշոր հետևանքների։

Մենք թողել ենք ժողովրդին իր անհատական փորձի ցուցումներին և կեանքի ընթացքի քմահաճոյքներին, իսկ այդ բաւական չէ ներկայումս։ Մեզ վրա աւելի ծանր և պատասխանատու պարտաւորութիւններ կան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՈԳՈՎ

Մենք չը պէտք է մոռանանք, որ հայ դերասանը շատ կարևոր ուժ է հէնց նրանով, որ նա հայ բեմի գործիչ է և այդ բեմից դուրս ոչինչ ասպարէզ չունի։ Պահպանել նրան, ճանաչել նրան կարևոր հասարակական գործ կատարող աշխատաւոր նշանակում է ամրապնդել այն տեղը, ուր նա ցոյց է տալիս իր շնորհքը—բեմը։ Իսկ անտես անել նրան, արհամարհել, նշանակում է կործանել հայ թատրոնը։

Մենք չը պէտք է մոռանանք և այն շատ կարևոր, կենսական խոշոր նշանակութիւն ունեցող հանգամանքը, որ դերասաններին մեր անտարբերութեամբ բեմից հեռացնելով, մենք թոյլ տուած կը լինենք, որ հայ բեմը ծածկվի որոմներով և մացառներով, ներկայացնէ անապատի, Անիի աւերակների պատկերը։ Իսկ [illegible] եթէ ոչ ուղղակի ինքնասպանութիւն։

Շնորհիւ այն հանգամանքի, որ վերջին 6—7 տարիների ընթացքում մեր դերասանական ուժերը այսպէս կամ այնպէս վարձատրվում են, արդէն կազմվել է մեզանում և հետզհետէ զարգանում է դերասանական դասակարգ։ Մշակվում է մի ամբողջ դպրոց։ Մի ժամանակ մենք մի ջուխտ կարգին դերասաններ չունէինք, այժմ արդէն այնքան կան, որ կարելի է ճոխ րէպերտուարների մասին էլ մտածել։ Բարձրացել է հայ բեմական արուեստը. ո՞վ կարող էր կարծել, թէ համաշխարհային գրականութեան մէջ աչքի ընկնող պիեսները խա- կոյն կը թարգմանվին և արժանաւոր կերպով կը ներկայացվին հայ բեմի վրա։ Գործի յաջողութիւնը անդադար հասարակութեան միջից նոր ուժեր է դուրս բերում, զարգացնում է տաղանդներ, ընդհանրացնում, ծաւալում է գաղափարը։ Այսօր Թիֆլիսում սիրողների խմբերը աջողութեամբ առաջ են տանում ժողովրդական թատրոնի գործը։ Ո՞րտեղ կազմակերպվեցին այդ համակրելի ուժերը, եթէ ոչ մեր դերասանների պահած բեմի ազդեցութեան տակ։

Հրաշքներ չեն կատարվում աշխարհիս վրա։ Իւրաքանչիւր կուլտուրական գործ այսպէս է զարգանում, այսպէս է դառնում հասարակական խոշոր երևոյթ։ Եթէ մայրենի բեմ ենք ուզում, չը պիտի սպասենք, որ Մովսէսի գաւազան երևայ մեզանում և քարերից յարուցանէ հայոց թատրոն։ Այդ սպասողութիւնը շատ իզուր, շատ դժբաղդ մի բան կը լինէր։ Հայոց բեմ արդէն կազմվել է, հայոց բեմը առաջ կը գնայ, կը մեծանայ։ Միայն թէ մենք հասկանանք, լաւ հասկանանք, որ նրա աշխատաւորները այսօր մեր աչքի առջև մեծ գործ են կատարում։

Երբ հաւաքական եռանդը նուիրվում է մի գործի, որ գերազանցօրէն հասարակական է, այս բառի ամենալայն մտքով, երբ առաջ է բերվում այն սկզբունքը, որ հասարակական գործի աշխատաւորը տալիս է իրանը, որպէս զի փոխադարձաբար ստանայ և հասարակութիւնից ու այդպէս ապահովված լինի հանրային օգուտը—այդ դէպքում հասարակութեան անտարբերութիւնը կը լինի մի սև ոճրագործութիւն, որի զոհը դերասանը չէ մի- [illegible] սինքն նոյն հասարակութեան կարիքը։

Պահպանենք ընկերակցական ոգին մեր հասարակական գործիչների մէջ։ Ընկերակցութիւնը գործիչներին տալիս է ինքնուրոյնութիւն, յղկում, մշակում է նրանց ընդունակութիւնները, ջնջում է անհատի պակասութիւնները, ստիպում է ամեն մէկին աշխատել, բարեխիղճ լինել, դառնալ ինքն իր արժանիքը ճանաչող, անկախ, համոզված մարդ։

Մեզ միայն շնորհքով գործիչներ չեն հարկաւոր, այլ և լաւ քաղաքացիներ, հասարակութեան լաւ անդամներ։ Իսկ դրա համար պիտի միջոց տանք, որ մարդիկ, ընկերակ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԷՅԴԱՐ-ՇԱՀ

(Պարսկական կեանքից)

—

Պատմուածք Շահրիարի

IV

Ղազվին թաղի մի նեղ փողոցում, մի տան դռան առաջ խռնված էր ահագին բազմութիւն։ Մարդիկ խօսում էին շշուկով, թափ էին տալիս գլուխներն և ամենքի դէմքի վրա տիրում էր տխրութեան, անկեղծ վշտի արտայայտութիւն։ Երբեմն-երբեմն կամացուկ բացվում էր տան դուռը, դուրս էր գալիս մէկը և յուսատու կամ յուսահատ տեղեկութիւններ հաղորդում դուրսը կանգնածներին։

—Ինչ է ասում հէքիմ-բաշին։

—Նա ասում է, որ թէև հիւանդութիւնը շատ ծանր է, բայց, ինշալլահ, նա կառողջանայ։

—Հէքիմ-բաշին յոյսը դրել է միայն Ալլահի և Իմամ-Րիզայի վրա, դուրս էր գալիս և յայտնում մի ուրիշը։

—Ափսոս մարդ. մեր տունը քանդվեց, փուլ եկաւ մեր գլխին, լսվում էին ձայներ։

—Եւ երբ մտածում ես, թէ այդպիսի մի մարդ պէտք է մեռնի մի մուռտառ էրմանու (հայի) պատճառով...

—Ախ, մէշէդի, ինչեր ես խօսում. երևի այդպէս էր Հէյդար-Շահի ճակատագիրը, ղըսմաթը. մի անգամ ինչ որ գրվել է նրա ճակատին, այն էլ պէտք է լինի. ադամորդին ինչացու է, որ կարողանայ այդ գրածը ջնջել։

Այն տունը, որի դռան առաջ տեղի էին ունենում այսպիսի խօսակցութիւններ, մեզ ծանօթ հաջի Աբբասի տունն էր, որի բիրունի (դրսի) մասի մի փոքր սենեակում տառապում էր մի քանի օրից ի վեր տիֆով վարակված Հէյդար Շահը։

Երբ նրա հիւանդութեան լուրը տարածվեց, քաղաքի ամեն կողմից մարդիկ թափվեցին քարվանսարան. եկան շուտով նաև հաջի Աբբասը և մէշէդի Քէրիմը, որոնց մօտ ամենից առաջ մարդ էր ուղարկել դալանդարը։ Վերջինս արդէն կարողացել էր յերիւրել իր գլխումն ամբողջ լեգենդա, որը պատմում էր զանազան փոփոխութիւններով ամեն մի եկողին։ Նրա կարծիքով, մուռտառ էրմանիները ջադուներ (կախարդներ) էին և իբլիսի (սատանայի) դրդմամբ թունաւորել էին Հէյդար-Շահին։

Երբ հաջի Աբբասը և մէշէդի Քէրիմը եկան ու մտան հուջրէն, ուր պառկած էր հիւանդը, վերջինս սաստիկ զառանցում էր։ Նրանց առաջին գործը եղաւ մի մարդ ուղարկել հէքիմ-բաշու ետևից. ապա, տեսնելով, որ նրա ճակատը և ամբողջ մարմինը կրակի պէս այրվում են, հաջի Աբբասը բերել տուեց սառոյց և դրեց գլխին. փէնջարի առաջ հաւաքվածների միջից մի ծերունի խորհուրդ տուեց արիւն առնել դամարից (երակից) և այդպիսով վռնդել չար ոգին, եթէ նա մտել է Հէյդար-Շահի մարմնի մէջ մուռտառ էրմանիների հետ շփումից։

Հաջի-Աբբասը կարգադրեց, որ դուրս հանեն խռնված բազմութիւնը և փակեն քարվանսարայի դուռը։ Այդ միջոցին վրա հասաւ հէքիմ-բաշին, որի մասին խօսում էին, թէ իր գիտութեամբ նոյն իսկ Լողմանին կարող է պապանձեցնել։

Նա բռնեց հիւանդի բազկերակը, երկար տնտղեց, մի քանի հարցեր տուեց դալանդարին, հանեց ծոցից մի մագաղաթեայ փոքր, բայց հաստ ձեռագիր, երկար որոնեց մի գլուխ, կարդաց և ապա արտասանեց. «խաթալըդ է»։

—Յոյս չը կա՞յ փրկելու, հարցրեց հաջի Աբբասը. ախ, հէքիմ-բաշի, դու պէտք է ազատես նրան. եթէ նա մեռնի, քանի քանի տներ, ընտանիքներ կանբախտանան։

—Ազատութիւնը Ալլահի ձեռքումն է, բայց, ինշալլահ, նա կը բժշկվի։ Պէտք է նրան ալուբուխարայի ջուր խմեցնել և հանգիստ թողնել, գլխին շարունակ սառոյց դնել. պէտք է այստեղից փոխադրել, տանել մի տուն. այստեղ հանգիստ չեն թողնի։

—Ես կը տանեմ նրան մեր տունը, ասաց ուրախացած հաջի Աբբասը. գուցէ Ալլահի տնօրէնութիւնն է, որ ես կարողանամ հատուցանել նրան իմ երախտագիտական պարտքը։ Գիտես, հէքիմ-բաշի, որքան բարերարութիւններ է արել նա ինձ. նա է ինձ օգնել ոտքի կանգնելու, տան, տեղի, ընտանիքի տէր դառնալու։

Մի ժամ յետոյ, հիւանդ Հէյդար-Շահը պատգարակի վրա փոխադրվեց հաջի Աբբասի տունը և վերջինս շրջապատեց նրան ամեն տեսակ խնամքով ու հոգատարութեամբ։

Սակայն անցել էր երեք օր և Հէյդար-Շահը ուշքի չէր գալիս, զառանցանքները չէին դադարում, տենդը երբեմն նուազում, երբեմն սաստկանում էր. հէքիմ-բաշու լողմանական ամբողջ գիտութիւնը չէր օգնում։

—Կեանքումս առաջին անգամ այսպիսի հիւանդութեան եմ պատահում, հաջի,—խոստովանեց հէքիմ-բաշին, երբ այցելուները մեկնելով, նրանք մենակ մնացին հիւանդի սենեակում։ Ինչպէս ես նկատում եմ, մի բան կայ, որ հիւանդին շարունակ տանջում է, կարծես նա երազում մի զարհուրելի բան է տեսնում։ Չը լինի այդ մուռտառ էրմանիների չար աչքը դիպաւ նրան, կամ չար թալիսման արին նրան։

—Նահլաթ չար շէյթանին, ասաց հաջի Աբբասը։

Այդ միջոցին ներս մտաւ մէշէդի Քէրիմը, որ լսեց խօսակցութեան վերջը։

—Երբ երէկ գիշեր ես հսկում էի նրա վրա, նա յանկարծ զառանցանքի մէջ քո հօր հաջի-Հուսէյնի անունը տուեց, հաջի Աբբաս, և ես շատ լաւ լսեցի, որ նա աղերսական ձայնով արտասանեց. «ոհ, մի անիծիր ինձ, հաջի Հուսէյն»։

—Ի՞նչ ես ասում, յուզված և այլայլված ասաց հաջի Աբբասը. այդ անկարելի է։

—Սուս, ասաց հէքիմ-բաշին, կարծեմ ուշքի է գալիս, տուր ալուբուխարու ջրից մի քիչ խմեցնեմ։

Հիւանդը հանդարտվել էր. տաքութիւնը նուազել. այժմ աւելի հանգիստ էր շունչ քաշում։

Ամենքը լուռ էին. փողոցում այլ ևս աղմուկ չէր լսվում. արդէն երեկոյացել էր և ամենքը քաշվել էին իրանց տները։ Ծառաները ներս բերին ճարպէ մոմի երկու ճրագ, իրանց մաղաշսերով, ապա սուրճ մատուցին և հեռացան։ Հիւանդի շնչառութիւնը աւելի և աւելի հանդարտում էր։

ցական ոյժով միացած, նուիրվեն հասարակական գործին, համոզված լինելով, որ միշտ մեր աջակցութիւնը, մեր համակրանքը կը գտնեն։

Կատարենք, ուրեմն, մեր հասարակական պարտաւորութիւնները նախ և առաջ դէպի մեր դերասանները, որոնք, ի պատիւ իրանց, ամենից առաջ շուտ են երևան գալիս մեզանում իբրև հաւաքական ոյժերով գործողներ։

Բագուցիները պիտի ցոյց տան, թէ ինչ են նրանք իբրև հասարակութիւն։ Ընկերական սկզբունքով պահվող հայոց թատրոնը դրա ամենալաւ ապացոյցը կը լինի։ Լ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 6-ին

«Մշակի» 198 համարում Հաղբատից տպված էր մի թղթակցութիւն, որի մէջ խօսելով նադել հողերի գնման մասին, յօդուածագիրը միանգամայն դատափետելով հողերի անհատական գնումը, ինձ մեղադրում է գիւղացիներին սխալեցնելու մէջ և միաժամանակ խորհուրդ է տալիս ինձ մտածել։ Նախ յօդուածագիրը շատ լաւ կանէր, որ փոխանակ ինձ խրատներ տալու, որ լաւ մտածեմ,—ինքը մի քիչ ջանքին ջափա տար և ծանօթանար Հաղբատեցիների հողատիրական պայմանների հետ. խնդիրը նրանումն է, որ եթէ Հաղբատեցիք սրտով էլ ցանկանան, անկարող են գնել նադել հողերը իբրև համայնք և ահա թէ ինչու։ 1866 թուականին Հաղբատեցիք պետական օրէնքով ստացել են նադել հողեր և уставная грамота, որի մէջ ամբողջ գիւղը բաժանված է 40 ծխի և իւրաքանչիւր ծխին առանձնապէս տրված է 8-ից մինչև 10 օրավար նադել վարելահող, որոնք շնորհիւ պատմական հանգամանքների և մանաւանդ վերջին դէպքերի համարեա անհատական սեփականութեան նշանակութիւն են ստացել։ Նրա վրա պէտք է աւելացնել, որ թէ հարուստ և թէ աղքատ հաւասար հող ունեն։ Վերոյիշեալ ասածներից պարզ է, որ միմիայն ծխերը առանձին առանձին կարող են գնել և ոչ թէ ամբողջ գիւղը իբրև համայնական սեփականութիւն։ Առհասարակ, մեր կարծիքով, եթէ յօդուածագիրը լաւ ծանօթ լինէր գիւղացիների տնտեսութեան եղանակին և այդ տնտեսութեան մէջ կատարվող պրօցեսներին, պէտք է համոզված լինի, որ համայնական կեանքը ներկայ պամաններում միանգամայն անկարելի ու վնասակար է. միաժամանակ, ուր աշխատել են համայնական կեանք ստեղծել նա դարձել է մի ֆիկցիա, և մեր գաւառներում համայնական հողատիրութիւնը ոչ մի գործնական հետևանքի չի հասել։

Այս բոլորից յետոյ ինձ մնում է խորհուրդ տալ յօդուածագրին ծանօթանալ մի քիչ այն հարցի հետ, որի [illegible]

Ուսանող Ա. Երզնկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնական տեղեկութիւններ խոլերայի մասին Բագւում. հոկտեմբերի 4 ին հիւանդացել են 7 հոգի (2 թուրք, 3 ռուս, 2 հայ), մեռել են 4 հոգի, որոնցից 2 ը նախկին հիւանդներից։ Հոկտեմբերի 5 ին հիւանդացել են 5 հոգի (2 թուրք, 2 ռուս, 1 հայ), մեռել են 4 հոգի, որոնցից 2 ը նախկին հիւանդներից։

—

Տեղական լրագիրներին հաղորդում են իբր լուր, որ Բ. Ս. Էսաղձէն խնդիր է ներկայացրել, որ իրան թոյլատրեն Թիֆլիսում մի պատկերազարդ շաբաթաթերթ հրատարակելու, «Кавказскій Край» անունով։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ժողովրդական դպրոցների տեսուչների միջոցով պահանջել է գաւառների և գեմստվօների վարչութիւններից՝ ընդհանուր պարտադիր կրթութիւնը իրականացնելու համար, հաւաքել հետևեալ տեղեկութիւնները և կարծիքները. կրթական եղած միջոցները և պահպանութեան միջոցներն այն հաստատութիւնների, որոնք ծառայում են տարրական կրթութեան համար՝ մինչև 1904 թւի. յունվարի 1-ը։ Ի՞նչ եզրակացութեան է հասել տեղական ուսումնասիրութիւնը՝—քանի դպրոց է հարկաւոր բաց անել, որպէս զի իրականանայ այդ շրջանում պարտադիր տարրական ուսումը. Երբ բաց անել այդ դպրոցները, որ իսկապէս հնարաւոր լինի և ինչ ծախքերով. Ինչպէս բաժանել ծախքերը զանազան հիմնարկութիւնների վրա, որ հնարաւոր լինի պարտադիր ընդհանուր տարրական կրթութիւնը։

—

Ստացանք վրացերէն մի փոքրիկ գրքոյկ—Աւետիս Ահարոնեանի «Լեռներում» (Մթէբշի) պատմուածքի թարգմանութիւնը, որ կատարել է Ղ. Կ.։ Տպված է Թիֆլիս, 1904 թ. գինն է 5 կոպէկ։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեցին հետևեալ նոր գրքերը. 1) Ռուդոլֆ Վիրխով, Ա. Բուզուղեանի, հրատարակութիւն Յովհաննէս Արամեանցի № 9, Վիրխովի պատկերով, Պետերբուրգ, 1904 թ, գինն է 25 կ., 2) Ձմեռային Հէքիաթ, Շէկսպիրի, համառօտութիւն Մերի և Չարլզ Լամբի, Թարգմանութիւն ռուսերէնից Յ. Նահապետեանցի, Թիֆլիս, 1904 թ., գինն է 10 կոպէկ։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ մշակվում է մի շատ կարևոր խնդիր. բաց անել Ռուսաստանում զեմստվօների հաշւով մի մեծ գործարան՝ երկրագործական կատարելագործված մեքենաներ ու գործիքներ պատրաստելու [illegible] րից ու գործարաններից։ Ծրագրի համաձայն՝ ամեն մի նահանգական զեմստվօ տալու է այդ գործի համար 3,000 ր., իսկ գաւառականները՝ 1,500 ական «Б. В.» լրագիրը հաշւում է, որ այդ միջոցով կը գոյանայ 650,000 ր. գումար, որ լիապէս բաւական է այդպիսի մի մեծ ձեռնարկութիւն սկսելու համար։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Կիրակի օրը՝ ամսիս 3-ին, տեղական հայոց եկեղեցում առաջին անգամ երգեց երկսեռ քառաձայն խումբը—թւով 40 հոգի։ Իբրև փորձ աւելի չէր կարելի պահանջել. յուսով ենք, որ դեկտեմբերի վերջերին բոլորովին պատրաստ կը լինի. այս բանը վաղուց ցանկանում ենք. շնորհակալութիւն ինիցիատօրին»։

—

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 1-ին, ուրբաթ օրը, երեկոյեան, տեղիս գործակատարների ժողովարանում տեղի ունեցաւ մի ներկայացումն։ Խաղացին Զիակոմետտիի յայտնի «Ոճրագործի ընտանիքը» պիեսը։ Խաղն ընդհանրապէս աջող անցաւ։ Դերասան Խարազեան փայլեց իր խաղով Կորրադոյի դերում, իսկ մնացած դերակատարները՝ տեղական սիրողները, պահպանեցին ամբողջութիւնը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Եանտայի ճակատամարտի առիթով։ «Новости» լրագիրը մի առաջնորդող է նուիրել Եանտայի մօտ տեղի ունեցած կռիւների առիթով։ Դեռ նոր էր Ռուսաստանը, ասում է նա, սկսել ուրախանալ ռուսաց ընդհանուր հրամանատարի խրախուսիչ կոչը կարդալով և ողջունել ռուսական բանակի արշաւումը, երբ պատերազմի բեմից ստացվեցին լուրեր այն կռիւների մասին, որ եւրօպական մամուլի նշանաւոր մասը կոչում է «պարտութիւններ»։ Թէև նահանջումը դեռ պարտութիւն չէ, թէև կռիւները դեռ չեն վերջացած, բայց եթէ հաշւի առնենք այն ամենը, ինչ որ անցել է երեկվանից ի վեր պատերազմի բեմի վրա, այն յոյսերի հետ, որոնք ծագել էին ամենքի սրտերում ճապօնացիների դէմ արշաւելու հրամանը կարդալիս, այն ժամանակ, ի հարկէ, վերջին տեղեկութիւններից ստացված ընդհանուր տպաւորութիւնը ծանր է։ Ռուսական բանակը իրապէս արշաւումն սկսեց և երեքօրեայ արիւնահեղ ճակատամարտերի ժամանակ աշխատեց ջարդել ճապօնական երեք միացեալ բանակները, բայց իր դիտաւորութեան մէջ չաջողվեց։ Պէտք է քաջութիւն ունենալ խոստովանել այդ անաջողութիւնը որ, պէտք է յուսալ, ժամանակաւոր է։ Երբէք չը պէտք է աչք փակել ճշմարտութեան վրա, որքան էլ նա անհաճոյ լինի։ Երբէք պէտք չէ արուեստական կերպով դիմակաւորել փաստը, մանաւանդ որ Ռուսաստանը կարող է ոչ միայն շտկել անաջողութիւնները, այլ և դաս քաղել նրանց ապագայի համար։ Ինչ և իցէ, եթէ նոյն իսկ նոր հաղորդագրութիւնները պատերազմի բեմից կը հասցնեն մեզ տխուր անհրաժեշտութեան՝ խօսել լուրջ անաջողութեան և նոյն իսկ պարտութեան մասին, մի՞թէ կարելի է չափազանց նշանակութիւն տալ այդ փաստին։ Մի՞թէ կարելի է խօսել Ռուսաստանի պարտութեան մասին։ Ռուսական բանակը կարող է պարտութիւն կրել Եանտայի մօտ, բայց այդտեղից դեռ շատ հեռու է մինչև Ռուսաստանի պարտութիւնը այս պատերազմի մէջ։ Դժբախտութիւնը կարող է մեծ լինել, պարտութեան հետևանքները կարող են շատ զգալի լինել, բայց այն ամենը, ինչ որ տեղի է ունեցել, կամ կարող է տեղի ունենալ, ուրիշ բան չէ, եթէ ոչ մի մասնակի իրողութիւն, սահմանափակված ժամանակով և տարածութեամբ։ Ռուսաստանը առաջվայ պէս մնում է ահագին, ըստ տարածութեան, և նրա առաջ բաց է անսահման ապագայ։ Այդ ապագայի մէջ անհետ կը կորչեն և յաւիտեան կը մոռացվեն բոլոր անաջողութիւնները և աղէտները, որքան էլ ծանր լինեն նրանք։

Սխալը միշտ ուղղելի է։ Ոչ մի դէպքում, նա չէ կարող խափանել Ռուսաստանին իր անաջողութեան հատուցումը ձեռք բերել աւելի կամ քիչ մօտաւոր ապագայում։ Եթէ ոչ այժմ, այլ աւելի ուշ, բայց յամենայն դէպս, Ռուսաստանը իր անելիքը կանէ։ Դրա համար նրա մէջ կը գտնվեն միշտ և հարկաւոր միջոցները և հարկաւոր հզօրութիւնը։

Ռուս լրագիրը վերջացնում է յօդուածը այս խօսքերով. «Մեծ ազգի քաջութիւնը կոփվում է փորձանքների մէջ։ Ներկայ պատերազմը հանդիսանում է Ռուսաստանի համար այնպիսի փորձանք, որին պէտք է նա յաղթէ և որը պէտք է ծառայէ նրա վերածնութեան, նոր կեանքի համար։ Չը կայ չարիք առանց բարիքի։»

Եանտայի ճակատամարտի թողած տպաւորութիւնը։ Լօնդօնից հեռագրում են «Köln. Zeit.» լրագրին, թէ ճապօնացիների աջողութիւնը այս անգամ նրա համար աւելի զօրեղ տպաւորութիւն գործեց, որ շատ հաւանական էր թվում, որ պատերազմական բախտը այս անգամ ռուսների կողմը կը դառնայ։ Այդ ենթադրութիւնը ծագել էր ոչ միայն գեներալ Կուրօպատկինի հրամանի վստահ տօնի, այլ և այն կարծիքի պատճառով, թէ ճապօնացիները դաշտի վրա չեն դիմանայ ռուսաց հեծելազօրքի և արտիլէրիայի գերազանց ոյժերի առաջ։ (Спб. А.)

Պօրտ-Արտուրի էսկադրան։ «Köln. Zeitung» թերթը հաղորդում է Շանխայից ստացված մի տեղեկութիւն, թէ Պօրտ-Արտուրեան էսկադրան հոկտեմբերի 1-ին (18 սեպտեմբերի) փորձ արաւ դուրս գալ նաւահանգստից, բայց ճապօնական ռազմանաւերի կրակը ստիպեց նրան յետ դառնալ։ «Ռետվիզան» զրահաւորը, լուրերին նայելով, այդ ժամանակ ծանր կերպով վնասվել է։ Լօնդօնից հաղորդում են, թէ պօրտ-արտուրցիները չեն դադարում սպասել բալթիական էսկադրայի շուտով հասնելուն, որը պէտք է ոչնչացնէ ճապօնական նաւատորմը և վերցնէ պաշարումը Պօրտ-Արտուրից։ (Нов.)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՍՊԻՏԱԿ ԳԻՐՔԸ

Լօնդօնում հէնց նոր լոյս տեսաւ պաշտօնական Սպիտակ Գիրքը, որ նուիրված է Թիւրքիայի դէպքերին անցեալ տարվայ դեկտեմբե-

---

—Նա քնանում է, ասաց հէքիմ-բաշին, այժմ նա փրկված է. Ալլահը ցոյց տուեց իր գթութիւնը։

Յանկարծ հիւանդը մի ջղաձիգ շարժումն գործեց, գլուխը բարձրացրեց, բացեց աչքերը, որոնք մի առանձին արտայայտութիւն ստացան, արտայայտութիւն, որից հաջի Աբբասի ամբողջ մարմնով սարսուռ անցաւ, և նստելով անկողնում, հարցրեց.

—Ո՞րտեղ եմ ես, ինչո՞ւ եմ այստեղ։

—Դու, Հէյդար-Շահ, հանգուցեալ հաջի Հիւսէյնի տանն ես, նրա որդի հաջի Աբբասի մօտ —ասաց յուզմունքից գրեթէ շնչասպառ հաջի Աբբասը։

Այս խօսքերը սարսափելի ազդեցութիւն գործեցին հիւանդի վրա։ Նա աչքերը ածեց սենեակի վրա և բոլորովին գունաթափ, սարսափած, պոռաց.

—Տարէք, տարէք ինձ շուտով այստեղից. Նա անիծում է ինձ, նա կամենում է ինձ խեղդել։

Նա ձեռքերը մեկնեց դէպի առաջ, որպէս թէ կամենում էր պաշտպանվել, փորձեց ոտքի կանգնել, բայց, ուժասպառ, ընկաւ անկողնի վրա և սկսեց ծանր շունչ քաշել։ Տենդը նորից սկսվեց, նրա հետ և զառանցանքը. Նա գալարվում էր տաքութեան մէջ, խուլ, անհասկանալի խօսքեր էր արտասանում։

—Ոհ, ասաց հէքիմ-բաշին, հիւանդութիւնը վերադարձաւ, այլ ես դժուար թէ նա բժշկվի։ Մի բան գիտե՞ս, հաջի, թէ ինչու քո հօր անունը այդպէս սարսափեցրեց նրան։ Ինչ պատահեց քեզ, հաջի։

Հաջի Աբբասի վրա հիւանդի արտասանած խօսքերն ևս աւելի սարսափելի ազդեցութիւն էին գործել. Նա մեռեալի գոյն էր ստացել և միայն արտասանում էր.

—Ալլահ, Ալլահ. Նա է, Նա է։

—Ով է նա, ում մասին ես խօսում, զարմացած և միատեղ հարցրին մէշէդի Քէրիմը ու հէքիմ-բաշին։

Բայց հաջի-Աբբասը կարծես չէր լսում. Նա անշարժացած՝ նստել էր։

—Չը լինի սա ևս հիւանդացաւ, մտածեց հէքիմ-բաշին։

—Մի քիչ ջուր, շշնջաց հաջի-Աբբասը։

Մէշէդի Քէրիմը դուրս գնաց և անմիջապէս մի շաքարայով ջուր բերելով, տուեց հաջուն. Երբ յուզմունքը մի քիչ հանդարտվեց, նա վեր կացաւ և ասաց. «Ես յոգնած եմ, գնամ միւս սենեակը մի քիչ պառկեմ և հանգստանամ. մի քանի ժամից յետոյ կը գամ հսկելու և դուք կը գնաք հանգստանալու։

Ու շտապով դուրս եկաւ սենեակից։

—

Մինչ Հէյդար-Շահը նորից տոչորվում էր տաքութեան և զառանցանքի մէջ, կողքի սենեակում հաջի Աբբասը նրանից ոչ պակաս տառապում էր հոգեկան տանջանքներից։ Մըթութեան մէջ նա պարզվել էր գորգի վրա և բարկութեան ու վրէժխնդրութեան զգացումները ալեկոծում, տակն ու վրա էին անում նրա սիրտը. Նրա հոգին խռոված էր. Նա մերթ մռնչում էր վիրաւորված գազանի նման, մերթ յուսահատական ճիչ արձակում։ Նրան թվում էր, որ ահա պէտք է խելագարվի. ինչ անեմ, ինչ անեմ, Ալլահ, գալարվում էր նա հոգեկան ցաւերի մէջ. ոչ մի տարակոյս չը կայ, որ նա է. Նա, հօրս, մօրս տունը, օջախը քանդողը, նրանց թշուառութեան, ժանվան պատճառ. Նա է, նա, անաստուած հաջի Իբրագը։ Հայրս անիծեց նրան և մեռնելուց առաջ պարտք դրեց իմ վրա վրէժ լուծել նրանից, անիծելով ինձ եթէ չը կատարեմ իր հրամանը։ Բայց այդ մարդը մի և նոյն ժամանակ իմ բարերարն է. Նա է, որ օգնեց ինձ մարդ դառնալ, հարստութիւն ձեռք բերել, հօրս տունը նորից տիրանալ. Նա հայրութիւն արեց։ Այժմ ի՞նչ անեմ, ո՞ր ջուրն ընկնեմ. Նա և իմ թշնամին է և բարերարը, իմ հօր տունը քանդողն է և վերաշինողը։ Բայց հօրս, սոսկալի տանջանքների մէջ մեռնող հօրս անէծքը. չէ՞ որ ես ամբողջ տարիներով որոնում էի նրան, տոչորվում էի վրէժխնդրութեան ծարաւով. այժմ, երբ նրան յանկարծ գտնում եմ, դուրս է գալիս, որ նա, անիրաւ և անօրէն հաջի Իբրագը, այն մարդն է, որին ամբողջ Իրանը պաշտում է, որ հազարաւոր դժբաղդների արտասուքն է սրբել, որ ինձ ազատել է թշուառութիւնից, հօր նման պաշտպանել ինձ, նեցուկ դարձել։ Ալլահ, Ալլահ, դու ինձ խելամուտ արա, դու ինձ սովորեցրու, ի սէր քո մեծ առաքեալի, թէ ի՞նչ անեմ, ի՞նչպէս վարվեմ։

Հաջի-Աբբասը ձեռքը դրաւ ճակատին. տենդալից յուզմունքը այնքան սաստկացաւ, որ նա մի րոպէ կարծեց, թէ սիրտը պէտք է պատռէ կուրծքը և դուրս գայ։ Նա վեր կացաւ, իջաւ բակը, մօտեցաւ մեծ աւազանին և սկսեց սառն ջուր ածել գլխին։ Նրա այրվող ճակատը մի քիչ զովացաւ և նա մի փոքր թեթևութիւն զգաց։

Լուսինը արդէն բարձրացել էր և նրա շողերը, ընկնելով աւազանի մէջ, արծաթի փայլ էին տալիս ջրին, որի մէջ, իբրև ջինջ հայելու, հաջի Աբբասը տեսաւ իր ստուերը, երկարացած. Նա վերադարձաւ սենեակը, վերցրեց մի խալիչա և բերեց, փռեց աւազանի մօտ ու նստեց, դիտելով արծաթափայլ շողերը։ Նիրհը սկսեց կոխել նրան և նրա ծանրացած աչքերը սկսում էին փակվել, երբ, յանկարծ, նա մի ճիչ արձակեց. Նրան թուաց, որ աւազանի գլխին մէկը կանգնած է. Նա սաստիկ վախեցաւ. ուրուականը անշարժ էր. հետզհետէ նրա անորոշ գծերը պարզվեցին և նա յստակ տեսաւ այդ ուրուականի մէջ իր հօրը, հաջի Հիւսէյնին, կանգնած, սպիտակ պատանքի մէջ փաթաթված. Նա լուռ էր, արձանացած, դէմքը տխուր, բայց ոչ զայրացկոտ։

Հաջի Աբբասի սիրտը այնքան սաստիկ բաբախում էր, որ նրան թուաց, թէ անմիջապէս պէտք է պայթէր. Նա շփեց աչքերը, կարծելով թէ երազ է տեսնում, բայց հայրը կանգնած էր անշարժ և տխրամած դէմքով։ Յանկարծ ուրուականը շարժվեց, ձեռքը բարձրացրեց դէպի երկինք, ապա մատով ցոյց արեց այն սենեակը, ուր տառապում էր հիւանդը և չքացաւ։

—Ալլահ, Ալլահ, շշնջաց հաջի Աբբասը, սարսափած և այլագունած. Նա հրամայում է ինձ վրէժը լուծել։

Ու արտասուքը հեղեղի նման սկսեցին թափվել նրա աչքերից։

Նա մտաւ սենեակը, փռվեց գորգի վրա և նորից դառն, յուսահատ մտքերը յուզեցին, ալեկոծեցին նրա հոգին։

Նրա առաջ պատկերացաւ իր մանկութեան և պատանեկութեան հեռանկարը։

(Կը շարունակվի)

րեց մինչև ներկայ տարվայ օգոստոսը։ Այդ գիրքը պարունակում է դեսպանի զեկուցումները արտաքին գործերի մինիստրին և հիւպատոսների զեկուցումները դեսպանին։ Գրքի նշանաւոր մասը նուիրված է հայկական գործերին։ Մենք կը բերենք մի քանի զեկուցումները։

Յունիսի վերջում դեսպան Օ'Կոննոր խօսակցութիւն ունեցաւ սուլթանի հետ, որ նա հաղորդում է հետևեալ կերպով.

«Սուլթանը յոյս յայտնեց, որ ես հաւատ չեմ ընծայի այն կեղծ հաշիւներին հայկական գործերի մասին, որոնք տարածվում են եւրոպական մամուլի մէջ։ Սուլթանը հաստատում էր, որ բոլոր յուզմունքները և անկարգութիւնները առաջացրել են այն բազմաթիւ ապստամբների խմբերը, որոնք եկել են Թիւրքիա այստեղ ապստամբութիւն առաջացնելու դիտաւորութեամբ։ Հնարաւորութեան չափ արիւնհեղութիւնը սահմանափակելու համար, նշանաւոր կենտրոնական ոյժեր կենտրոնացրվեցին Մուշի շուրջը և ուղարկվեցին յեղափոխականների դէմ։ Սուլթանը ամենադրական հրամաններ է տուել և արել է բոլորը, ինչ որ կարող էր, խաղաղ ազգաբնակութեան վրա սպանութիւններ և բռնութիւններ չը գործադրելու համար, և յոյս ունի, որ ես զեկուցում կանեմ այդ մասին իմ կառավարութեանը։ Ես առարկեցի, որ հիւպատոսների հաշիւները լրիւ չեն և նրանցով չէ կարելի հասկացողութիւն կազմել Սասունում տեղի ունեցած դէպքերի մասին, բայց 3000 փախստականների Մուշում գտնվելը և 500 հայ բնակարանների աւերելը ամենապակասը անբացատրելի են. ես աւելացրի, որ շատ վախենում եմ, որ տեղի են ունեցել խոշոր բռնութիւններ։ Ես յոյս յայտնեցի, որ կանոնաւոր զօրքերը մասնակցած չէին լինի նրանց. սակայն եթէ այդ բռնութիւնները կատարած լինեն անգամ քիւրդերը, այդ բանը չէ փոքրացնում յանցանքը, որովհետև այդ բանին ներկայ են եղել զօրքերը։ Ես չէի կամենայ հաւատալ գազանութիւններին վերաբերեալ պատմութիւններին, բայց նրանք երկիւղ են յարուցանում, և ես, առանց տատանվելու, յայտնում եմ այդ բանը ձեր մեծութեանը։ Ոչինչ չէ կարող աւելի կործանարար լինել ձեր մեծութեան և կայսրութեան ամբողջութեան համար, քան հայկական Ջարդի կրկնութիւնը։ Ես չեմ կարող երաշխաւոր լինել այն գայլոյթի հետևանքների համար, որ նոր Ջարդի լուրը կարող էր առաջացնել Եւրոպայում։ Ձեր մեծութեան շահն է ակներև ապացուցանել, որ դուք չէք թոյլ տայ բռնութիւններ ձեր հայ հպատակների վրա, որոնք ձեր ամենահաւատարիմ հպատակները կը դառնան այն օրը, երբ կերաշխաւորվի նրանց կեանքի և գոյքի ապահովութիւնը։ Այդ բանին կարելի է հասնել, եթէ օրէնքները ամբողջ խստութեամբ գործադրվեն մի քանի քիւրդ պարագլուխների վերաբերմամբ, որոնք աշկարայ կատարում են կողոպուտներ և սպանութիւններ։ Սուլթանն ասեց, որ բոլորը, ինչ որ ես լսել եմ, խիստ չափազանցրված է և որ ապստամբները տարածում են ամեն տեղ կեղծ հաշիւներ։ Նա չէ կարող հերքել, որ եղել են սպանութեան դէպքեր և որ, երևի, շատ անմեղ մարդիկ, որոնց ապստամբները ստիպել են զէնք վերցնել, սպանվել են, բայց թէ նա ամենախիստ հրամաններ է արձակել մոտ չը թողնել քիւրդերին ապստամբութեան բեմին, և նա հաւատում է (?), որ նրա հրամաններին հնազանդվում են»։

Դրանով աւարտվեց հետաքրքիր խօսակցութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիա։ Մարսէյլի գործադուլը պաշտօնապէս վերջացել է։ Պարիզից ստացված լուրերին նայելով, գործադուլի պատճառած վնասները հասնում են 80 միլիօն ֆրանկի։ Նաւատէրերը շաբաթական վնասվում էին 230,000 ֆրանկ։ Խոշոր ալիւրաղացներն ունեն 6,278,000 ֆրանկ վնաս, իւղարանները՝ 5,700,000 ֆրանկ և սապօնի գործարանները՝ 4,020,000 ֆրանկ։ Բանկերը համարեա բոլորովին ստիպված եղան դադարեցնել իրանց գործողութիւնները։ Առևտրական նաւատորմի միայն նաւաստիների պարապ անցկացրած մէկ օրն արժէր 39,000 ֆրանկ, դօկերի բանւորներինը՝ 25,000, կառապաններինը՝ մոտ 12,000 ֆրանկ, իսկ բոլոր բանւորներինն էլ միասին՝ 120,000 ֆրանկ։

Աւստրիա։ Չեխական սէյմի երկրորդ նիստն առաջինից աւելի արդիւնաւոր չեղաւ։ Մի քանի ժամ շարունակ գերման պատգամաւորներն օբստրուկցիա էին անում։ Կուսակցութիւնները հաւաքվեցին օբէրլանդմարշալ Լօբկօվիցի մոտ մասնաւոր ժողովի, որ մի կերպ համաձայնութիւն կայացնեն, բայց այդ էլ ապարդիւն անցաւ։ Գերմանները յայտնեցին, որ չը նայելով ազգաբնակութեան աղքատ վիճակին և անմիջական օգնութեան կարիքին՝ նրանք չեն կարող օբստրուկցիան դադարեցնել, քանի որ չեխերը չեն դադարեցրել Վիէննայի րայխսրատում, ուր նրանք են կազմում փոքրամասնութիւնը։ Չեխերը պահանջեցին, որ կազմվի երրորդ ժողով համաձայնութեան գալու համար, բայց գերմանները հրաժարվեցին մասնակցել այդ ժողովին և չեխերին ուղարկեցին իրանց պահանջները գրաւոր, թղթով։

Թիւրքիա։ Բ. Դուռն շտապով շարունակում է իր ծովային սպառազինութիւնները։ Մի քանի ժամանակ առաջ Թիւրքիան խոշոր պատերազմական նաւեր էր պատուիրել Ամերիկայում, որոնց մի մասն արդէն վերջացել է, իսկ միւս մասը դեռ շինվում է։ Իսկ այժմ նա ձեռք է զարկել մանր նաւերի շինութեան։ Վերջերս ֆրանսիական Կրէզօ քաղաքի գործարանները պատուէր են ստացել շինել 4 ականանաւ։ Նոյնանման պատուէրներ ստացել են և մի քանի իտալական նաւարաններ։ Արտասահմանեան լաւատեղեակ լրագիրների կարծիքով՝ եթէ այդ բոլոր պատուէրները կատարվեն և ստացվեն, այն ժամանակ Ոսկեղջիւրի զինուորական հրաշալի նաւահանգիստը կունենայ բաւական պատկառելի մի նաւատորմ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 նոյեմբերի

ՏՕԿԻՕ, 6 նոյեմբերի։ (Րէյտէր)։ Կառավարութիւնը որոշեց Ռուսաստանի ուշադրութիւնը դարձնել այն բանի վրա, որ ռուսաց զօրքերը ապօրինի կերպով չինական ձևի զգեստ են հագնում։ Յայտագիրը կը յանձնվի Պետերբուրգի ամերիկական դեսպանութեան միջոցով։ Ճապոնիայի արտաքին գործերի մինիստրութիւնը կազմեց մի յիշատակագիր, որի մէջ հաստատում է, որ սեպտեմբերի 22-ին ռուսաց մի հետևակ զօրաբաժին, չինական շորեր հագած, յարձակում գործեց ճապոնացիների վրա, Մուկդէն տանող ճանապարհի վրա։ Ռուսների միւս զօրամասերը, նոյն ձևի հագուստով, նոյնպէս մօտենում էին ճապոնացիներին՝ նրանց յանկարծակիի բերելու համար։—Զեկուցումներից երևում է, որ ռուսները չինական զգեստի ահագին քանակութիւն են գնում։ Յիշատակագիրը աւելացնում է, որ եթէ պատերազմող կողմերից մէկը իրան յատկացրած զգեստ չէ կրում, այդ բանը պատժվելու է որպէս պատերազմի կանոնների խախտումն լրացուցիչ կանոնների և սովորութիւնների 23-րդ յօդուածի համեմատ։ Յիշատակագիրը վերջում խօսում է այդ տեսակ վարմունքի մեծ վտանգի մասին չինացիների համար, որովհետև յայտնի հեռաւորութեան վրա նրանց չէ կարելի զանազանել ռուս զինուորներից։—Պարլամէնտը հրաւիրվում է նոյեմբերի 15-ին։—Ստորագրված է այն պայմանագիրը, որով Մեգատան նշանակվում է ֆինանսական խորհրդական Կորէայում։ Նրան կօնտրօլի և նախաձեռնութեան իրաւունք է տրվում։ Բոլոր ֆինանսական ձեռնարկութիւնները կարելի է սկսել միայն նրա նախնական թոյլտւութեամբ։

ՉԻՖՈՒ, 7 նոյեմբերի։ (Րէյտէր)։ Ճապոնական առևտրականները Պորտ-Արտուրը պաշարող բանակից ասում են, որ, օֆիցէրների խօսքով, բերդը կը վերցվի մէկ ամսից յետոյ։ Շարունակում են Դալնիից պաշարող թնդանօթներ ուղարկել ճակատի դիրքերի վրա դնելու համար։—Զօրքերի մեծ քանակութիւն գտնվում է Գէնզան տանող ճանապարհի վրա։ Դալնի ուղարկվելիք շատ փոխադրիչ նաւեր ուղարկվեցին Գէնզան։—Ճապոնական նաւը ցարենով խորտակվեց Մեաօդաօ կղզիների մօտ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 նոյեմբերի։ (Ռուսաց. գործ.)։ Հէնց նոր եկան Մեծ Բէլտ՝ մեծ չափի ռուսական մի պատերազմական նաւ և 8 կամ 9 ականաւեր,

ՇԱՆԽԱՅ։(Րէյտէր)։ Արևմտեան Կվանտունում կազմակերպվում են աւազակախմբեր ապստամբութիւն առաջացնելու համար Կանտօնեան նահանգում։

ՖԱՐԻՑՈՒՆԳ (Րէյտէր)։ Գլխաւոր բանակը և արշաւախումբի վերջին զօրասիւնը անցան Տանգի կիրճը փոթորկի և սաստիկ բուքի ժամանակ։ Զօրքերի տանջանքները սարսափելի էին։ Շատ վրաներ քանդվեցին ձիւնի ծանրութեան տակ։ Ձիւնի տակ թաղված մարդիկ սաստիկ յոգնած էին և ոյժ չունէին վրաները բարձրացնել։ Երկուսը մեռան։ Ձիւնը սաստկանում է, ճանապարհը բռնել է և այնքան խոր է, որ մարդիկ և ձիերը խրվում են նրա մէջ։

ԼՈՆԴՈՆ։ (Րէյտէր)։ Տիկին Կէրզօնի հիւանդութեան պատճառով լորդ Կէրզօնը յետաձգեց իր գնալը Հնդկաստան մինչև նոյեմբեր։ 1901 թւից դէպք չէր ներկայանում աւղանական էմիրի տեսակցութեան համար հնդկական կառավարութեան ներկայացուցչի հետ, որի ժամանակ հնարաւորութիւն կը լինէր քննութեան առնել ընդհանուր հարցերը. այժմ էմիրը առաջարկեց ուղարկել իր աւագ որդուն Հնդկաստան, լորդ Կէրզօնի հետ տեսակցելու համար և նոյնպէս ցանկութիւն յայտնեց ընդունել Կաբուլում հնդկական կառավարութեան մի պաշտօնական անձն, որը լիազօրութիւն ունենար քննութեան առնել էմիրի և բրիտանական կառավարութեան փոխադարձ յարաբերութիւններին վերաբերեալ հարցերը։ Այդ նպատակով նոյեմբերի վերջում Կաբուլ կուղևորվի լիազօրութիւններ ունեցող մի օֆիցէր։

ԻՒՐԻԵՎ։ Քաղաքում ցնծութիւն է տիրում Արքայական շնորհի առիթով, որ հաղորդեց կորպորացիաներին ժողովրդական լուսաւորութեան մինիստրը։ Կորպորացիական գլխարկներ կրելու նոր շնորհված իրաւունքը հիացմունքով ընդունվեց։ Կորպորացիաները ուղարկեցին Թագաւոր Կայսրին մինիստրի միջոցով հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ արտայայտող հեռագիր։

Կ. ՊՕԼԻՍ։ Յունական դեսպանը ամեն ջանք գործ է դնում հաշտեցնելու համար սինօդի և ազգային խորհրդի անդամներին պատրիարքի հետ՝ վերջինիս հրաժարականի առաջն առնելու համար։ Մեծ պատրաստութիւններ են տեսնվում Բաղդադի երկաթուղու Կօնիա-Էրէգլեան ճիւղը հանդիսաւոր կերպով բանալու համար։

ԴՐԵԶԴԵՆ։ Երեկոյեան 8 ժամին տեղի ունեցաւ հանգուցեալ Գէօրգ թագաւորի թաղումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Associated Presse» Պետերբուրգի բաժանմունքը յայտարարում է, որ նա լիազօրութիւն ունի կտրականապէս հերքել այն հաղորդագրութիւնը, որ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը մտադրութիւն ունէր առաջարկել պատերազմող կողմերին իր բարի ծառայութիւնները խաղաղութիւնը վերականգնելու համար։ Վաշինգտոնի կառավարութիւնը երբէք այդպիսի բան նկատի չէ ունեցել։

ՏՕԿԻՕ։ (Րէյտէր)։ Վստահութիւն ներշնչող հաշիւներով մասնաւոր աղբիւրից, ճապոնական ձախ բանակի կորուստները որոշում են 5000 մարդ։ Ռուսները աջակցութիւն ստացան մօտ 13,000 մարդ։ Ընդամենը 6 դիվիզիա կանգնած են այդ բանակի դէմ։ Սաստիկ անձրևները արգելք են լինում այդ շարժումներին։

ԲԵՐԼԻՆ։ Այն լուրի առիթով, թէ ռուսաց զօրքերը չինական հագուստ են հագնում, «Կէօլնի Լրագիրը» ցոյց է տալիս, որ ռուսական լրագիրների հաղորդագրութեամբ, ռուսաց շատ զինուորներ, ցուրտ գիշերների պատճառով, հագնում են չինական կուրմաներ։ Տաք իրերը մնացին Խարբինում և իր ժամանակին չը կարողացին հասցնել, որովհետև վատ եղանակի պատճառով հաղորդակցութիւնները ընդհատված էին։ Այդպիսի փաստեր նկատվեցին 1870 թ. գերմանական զօրքում։

ԲԵՐԼԻՆ։ «Նորդ. Ալգէմ. Ցայտ.» լրագրում զետեղված է երկար հաղորդագրութիւն, որի մէջ մանրացոյց է արված, թէ «Թայմսի» յայտարարութիւնը գերմանական դիպլօմատիայի միջամտութեան մասին անգլօ-տիբէտական դաշնագիրը կնքելու գործի մէջ, բոլորովին ճիշդ չէ։

ՍԿԱԳԵՆ։ Հոկտեմբերի 7-ի առաւօտեան ժամանեցին Լալբէկեան ծովածոցը՝ Սկագէնից հարաւ՝ ռուսական 8 զինուորական նաւ բալտիական էսկադրայից։ Ժամը 8-ի մօտ Հիրշհոլմ կղզու մօտով անցան 8 զինուորական նաւ էլ և բոլորն էլ խարիսխ նետեցին ծովախորշում, ուր գտնվում են 3 ածխանաւեր։

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ։ Ֆօլկետինգ։ Բիւջէտի առաջին ընթերցանութեան ժամանակ մինիստր-նախագահը յայտնեց, որ մշտապէս ջանք է արվում Դանիայի չէզոքութիւնն ապահովելու երկար ժամանակով։ Անցեալ տարի այդ առիթով կարելի եղաւ հասնել նշանաւոր աջողութեան։

ՍԱԼՕՆԻԿ։ Մի բօլգար քահանայ սպանված է իր տան մէջ մի յոյնի ձեռքով։ Սալօնիկի բօլգարների մէջ սաստիկ գրգիռ է տիրում։

8 նոյեմբերի

ԽԱՐԲԻՆ, 7 նոյեմբերի։ (Սեփ. թղթ.)։ Գործերի ընդհանուր վիճակը հարաւային ճակատի կողմում անփոփոխ է։ Հոկտեմբերի 6-ին պատերազմական ընդհարումներ չեն եղել։—Գեներալ Գրեկօվի զօրախումբը խուզարկութիւն է արել, որից երևացել է, որ Սանդէպուի մէջ գտնվում է թշնամու մեծ ոյժ՝ արտիլէրիայով և գնդաձիգներով։

ԼՈՆԴՈՆ։ Օկուի բանակի «Րէյտէրի գործակալութեան» թղթակիցը հաղորդում է հոկտեմբերի 3-ից, որ 7 օրեայ պատերազմի ընթացքում, ճապոնացիների ասելով, նրանք կորցրել են 3,000 մարդ՝ սպանված և վիրաւոր։ Ռուսները մեծ կորուստներ են ունեցել, մանաւանդ կատաղի հակայարձակումների ժամանակ, որ նրանք կատարում էին ճապոնացիների գրաւած ամեն մի գիւղի դէմ։ Շատ դէպքերում յարձակվող խմբերը բոլորովին ոչնչացվում էին։ Ռուսներն ամեն տեղ կռւում էին կտրիճաբար և լաւ, բայց չը կարողացան ճապոնացիներին դուրս քշել իրանց դիրքերից։ Ձախ բանակի ճակատը 10 մղոնաչափ էր։ Նա մօտ 5 մղոն առաջ շարժվեց։ Ռուսները, կռիւը չը դադարեցնելով, շատ լաւ ապահովում էին իրանց նահանջը արտիլէրիայով և իրանց հետ տարան մի մեծ կառախումբ պաշար և բազմաթիւ վիրաւորներ։ Հոկտեմբերի 3-ին ռուսական երկու գունդ և երկու բատարէա եռանդուն հակագրոհ տուին Լապուտունի վրա, որ յետ մղվեց կէս ժամ կռւից յետոյ։ Այդ բանակի դէմ գործում են ռուսական 3 կորպուս, 30 բատարէա և համարեա բոլոր նորեկ զօրքերը։

ՉԻՖՈՒ, 7 նոյեմբերի։ (Րէյտէր)։ Վերջերս Պորտ-Արտուրի մօտ պատահած անցքերից ամենանշանաւորներն են Էրլունշանի մօտ մի քանի երկրորդական դիրքերի գրաւումը ճապոնացիներից և նրանց հակաականանաւի լուրջ վնասումը, որ առաջացել է մի ականի պայթելուց։

ՌԻԳԱ։ Ժամանեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրը և այցելեց դպրոցական հաստատութիւնները։

ԵԱԼՏԱ, 7 նոյեմբերի։ Կատաղի փոթորիկ պայթեց։ Ծովը սաստիկ ալեկոծ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սամարայի նահանգը յայտարարված է խոլերայի կողմից անբարեյաջող։

ՉԻՖՈՒ, 7 նոյեմբերի։ (Րէյտէր)։ Ճապոնացիները սեպտեմբերի 26-ի արշալոյսին յարձակումն գործեցին Էրլունշանի արտաքին ամրութիւնների վրա, բայց յետ մղվեցին։ Հետևեալ օրը ռուսները իրանք յարձակվեցին ճապոնական խրամատների վրա, բայց նոյնպէս յետ մղվեցին։ Անմիջապէս դրանից յետոյ ճապոնացիները նոր յարձակումն գործեցին, գրաւելով երկաթուղային կամուրջը և նրանից դէպի հարաւ գտնվող բարձրութիւնները։ Այդ դիրքերի գրաւման գլխաւոր նշանակութիւնը կայանում է նրանում, որ նրանցով շատ սահմանափակվում է ռուսների կրակից հարուածվող շրջանը։ Այդ գրաւումից յետոյ, ճապոնացիները իրանց խօսքով, աջողաբար յետ են մղում այն բազմաթիւ յարձակումները, որ պահակազօրքը գործում է նորից դիրքերին տիրանալու նպատակով։ Սեպտեմբերի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին, դուրս եկան ռուսաց եօթն հակա-ականանաւեր։ Մի քիչ յետոյ դուրս եկան էլի երկու նաւ և ուղղվեցին Սաօբինդաօ, որտեղից ռմբակոծեցին ճապոնական ձախ թևը։ Երբ ճապոնական 4 հակաականանաւ մօտեցան, ռուսաց նաւերը վերադարձան նաւահանգիստ։ Նրանց հալածող ճապոնական նաւերը կանգ առան ջրային տարածութեան ականաւորված մասի մուտքի առաջ։ Ճապոնական ականանաւերի վերադարձին, նրանցից մինը դիպաւ ականի, որ ծանր վնասներ պատճառեց։ Սակայն նա կարողացաւ հասնել Դալնի, ուր նա կարկատվում է։ Բոլոր այդ ժամանակ պաշարողական թնդանօթները հարուածում էին Պորտը։ Չինացիների խօսքով, Էրլունշանի շտուրմի ժամանակ, ռուսաց զրահաւորները հրաձգում էին գրեթէ անընդհատ հիւսիսային ուղղութեամբ։ Ռուսաց զօրքերի թիւը Պորտ-Արտուրում 5000 է, չը հաշւելով կամաւոր դրուժինաները, որոնք չեն մասնակցում կռիւներին և նշանակված են զինարանների կարգը և պահպանութիւնը պաշտպանելու։ Տաք հագուստի պակասութիւն է. մանաւանդ զգալի է կօշիկների պակասութիւնը. զինուորները կրում են չինական կօշիկներ, մի քանիսը ման են գալիս ոտի փաթաթաններով։ Պահակազօրքը յոգնած է անընդհատ կռւից։ Քաղաքը լի է վիրաւորներով։ Ալիւրը առատ է, կայ ձիի թարմ միս, իսկ յետոյ ջորու, և էշի միս։ Ճապոնացիները շարունակ աջակցութիւն են ստանում։ Նրանք գրեթէ վերջացրել են պաշարային ահագին մագազինների շինութիւնը Դալնիի և Արտուրի մէջտեղ, և դարսում են ուտեստ ու մթերք բաւականաչափ քանակութեամբ, գոհացումն տալու պահանջներին մինչև գարուն։

Նոյնպիսի պատրաստութիւններ արվում են Նիւ-Չժուանում։

ԼՈՆԴՈՆ, 7 հոկտեմբերի։ (Րէյտէր)։ Ռուսաց բանակում գտնվող «Նիւ-Եօրկ Հերալդի» թղթակից Շէնկինի հեռագրի համաձայն, հոկտեմբերի 6-ից Կուրոկին մեռնում է որովայնալուծութիւնից։

ՏՕԿԻՕ, 7 հոկտեմբերի։ (Րէյտէր)։ Ռուսները ամրացնում են բոլոր իրանց դիրքերը Շախէի և Խունխէի միջև։ Աւելի և աւելի ակնյայտ է դառնում, որ նրանք մտադիր են ցոյց տալ, յամառ դիմադրութիւն ճապօնացիների նոր արշաւման դէպի հիւսիս։

ՄՈՒԿԴԷՆ, 7 հոկտեմբերի։ (Րէյտէր)։ Մեծ ճակատամարտը աւարտվեց։ Երկու բանակները կանգնած են այժմ իրար հանդէպ, բաժանված Շախէ գետով. արտիլլէրիական մենամարտը շարունակվեց 5 և 6-ին ամբողջ երկու օրվայ ընթացքում։ Ռուսական կենտրոնը շարժվում է ամեն օր մի քիչ առաջ, սոսկալի թնդանօթաձգութեան մէջ։ Իրանց ձախ թևի վրա, ռուսները գերագանց դիրք են գրաւում այն բլրի վրա, որ տիրում է Շախէին, որը նրանք գրաւեցին հոկտեմբերի 3-ին, չը նայելով անընդհատ թնդանօթաձգութեան և հետևակի յաճախակի յարձակումներին։ Աջ թևի վրա ռուսները գործ են ածում մորտիրներ, որոնցով աշխատում են փախցնել ճապօնացիներին այն փոքր բլրից, որ գտնվում է դաշտի վրա։ Վերջին հեղեղային անձրևների պատճառով, գետերը յորդել են, ուստի պէտք է շարժական կամուրջներ, որովհետև Շախէի վրա կամուրջներ չը կան։

ՇԱՆԳՀԱՅ, 7 հոկտեմբերի։ (Րէյտէր)։ Ենթադրում են, որ ռուսաց մեծ ոյժեր կենտրոնացած են Կուրոկիի ձախ թևի դէմ, Պինսաիձիի ուղղութեամբ։

ՉԻՖՈՒ, 7 հոկտեմբերի։ (Րէյտէր)։ Ռուսները գնել են 6 չինական կաբոտաժային շոգենաւեր այն նպատակով, որ նրանցով օգտվեն պաշարման գիծը պատռելու։ Էլի մի շոգենաւ, որ ընթանում էր ֆրանսիական դրօշակով, բերեց Պորտ-Արտուր ուտեստներ։—Մի քանի ժամ տևող արիւնայեղ կռիւ տեղի ունեցաւ Երլունշանի լանջերի վրա։ Կռւին մասնակցող զօրքերը սակաւաթիւ էին, այնու ամենայնիւ ճապօնական կորուստները կազմում են երեք հարիւր սպանված և վիրաւոր։ Ճապօնացի վիրաւորները ասում են, որ նրանց զինւորները խրամատների մէջ սաստիկ նեղվում են ցրտից, թէև ճապօնական զօրքերը գրեթէ ամբողջովին ձմերային հագուստ ունին։—Պահակազօրքը սաստիկ տենչում է ստանալ լուրեր Կուրոպատկինի մասին, որից սպասում է փրկութիւն։ Բալտիական էսկադրայի դուրս գալու լուրը սաստիկ խրախուսեց պահակազօրքին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Սախարօվի հեռագիրը գլխաւոր շտաբին հոկտեմբերի 8 ին. «Հոկտեմբերի 6 ին մեր զօրքերը սաստիկ խուզարկութիւններ կատարեցին Ցին Դեապուցիւզից դէպի հարաւ տեղաւորված հակառակորդի ոյժերի մասին։ Հակառակորդի առաջաւոր մասերը յետ մղվեցին դէպի հարաւ։ Մեր զօրախմբի վրա կրակ բացանող ճապօնական բատարէան ստիպվեց լռել և նահանջել հարաւ։ Հոկտեմբերի 7-ին պատերազմական ընդհարումներ հակառակորդի հետ չեն եղել։ Առաւօտեան մշուշի պատսպարութեամբ մեր կամաւորները Զալեսլօվ պօդ-պօրուչիկի գլխաւորութեամբ բերին հակառակորդից շատ մօտ տարածութիւնից ճապօնական մի թնդանօթ, որ թողված էր, Պուտիլօվեան բլրի վրա։ Ճապօնացիների բացած հրացանային սաստիկ կրակը, մշուշի պատճառով, ապարդիւն անցաւ»։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

6 հոկտեմբերի

Բօրսայի դիսկօնտը	6—$7^{1}/_{2}$%	»
Պետական 4% ռենտան	$91^{7}/_{8}$ —	»
I Խաղար. տոմսերը	418— —	»
II » »	320— —	»
III » »	269— —	»
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	— — —	»
Բագուի » »	— — —	»
Թիֆլիսի հող. բանկի 5%	— — —	»
» » » $4^{1}/_{2}$%	— — —	»
Բագուի նաւթ. Ընկ.	474— —	»
Կասպիական Ընկ.	5450— —	»
Մանթաշեան և Ընկ.	$242^{1}/_{2}$ —	»
Նօբէլի և Ընկ.	10850— —	»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ձեռնարկութիւն Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկօյի

Այսօր, շաբաթ, հոկտեմբերի 8-ին, մասնակցութեամբ տ. տ. Վիկչեմսկայի, Դօնսկոյ-Էյխէնվալդի, Միխայլօվսկայի, Շիխուցկայի-Մինչէնկօի, Խարիտօնովայի, Ֆերարի. պ.պ. Դօնսկու, Կոմարօվի, Դեմեանենկօի, Սպերանսկու, Բագրօվի, Զալինսկու և Մուրատօվի։

Պարերը կը դնէ բալէտմէյստր Է. Ի. Զիօվասսի։ Պրիմա—բալերինա Ե. Ս. Լենչևսկայա։

Կը ներկայացվի

ՊԻԿՕՎԱՅԵԱ ԴԱՄԱ

օպերա 3 գործ. 7 պատ. մուզ. Չայկօվսկու։

Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

Վաղը, կիրակի, հոկտեմբերի 10-ին, կը ներկայացվի ԵՒԳԷՆԻ ՕՆԷԳԻՆ, օպեր. 3 գործ. երաժշտ. Չայկօվսկու։

Երկուշաբթի, հոկտեմբերի 11 ին ի նպաստ Թիֆլիսի 3-րդ գիմնազիայի չքաւոր աշակերտների կը ներկայացվի «ԴՈՒԲՐՕՎՍԿԻ», օպերա 4 գործ. երաժ. Նապրավնիկի։

Պատրաստում են ներկայացնելու առաջին անգամ Թիֆլիսում «ՎԵ"ՏԵՐ» օպերա 4 գործ. երաժշտ. Մասսենէի և «ՆԷՐՕՆ» օպ. 4 գործ. երաժշտ. Ռուբինշտէյնի։

Տոմսակները ծախվում են։

1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէլլեր

ԲԺՇԿ. ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ

Նախ՝ օրդինատօր Մօսկվայի Համալսարանի կլինիկայի ընդունում է հիւանդներին՝ ՄԻՋԱՍԵՌԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ և ՄՈՐԹՈՒ հիւանդութիւններով ամեն օր 10—11 ժ. առաւօտեան և 6—8 ժ. երեկոյեան։ Հասցէն Րտիշչէվսկի փողոց, տուն № 1 «Պաժարնի կօմանդի» դիմաց, տէլէֆօն 711.

(ա. օ.) 3—10

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ

գրավաճառանոցում վաճառվում են.

Ерицовъ, Исторія холерной эпидемій въ Закавказьи, 20 к.
Вермишевъ, Матеріалы для исторіи грузино-армянскихъ отношеній. (Отвѣтъ на книжку Чавчавадзе), 1 р.
«Գայուտի և Շուշանիկի պսակվելը (Հարսանեկան պատկեր), 12 կ.։
Բաժանորդագրութիւն «Առողջապահիկ Թերթի», Վ. Արծրունու, 2 ր. 50 կ.։
Բաժանորդագրութիւն Դաղբաշեանի ռուս.-հայերէն բառարանի, 6 ր.
Նոյնի Հայեր.-ռուսերէն բառարանի, 4 ր.։
«Հայկական տպագրութ.», Լէօի, ը. տպ. 1 ր 20 կ.
«Դէպի Արարատ», Ա. Մխիթարեանի 40 կ.
«Գիտութիւն» պատկերազարդ ամսագիր, տարեկան 5 ր., իւրաքանչիւր համարը 50 կ.
«Երջանիկ իշխան»ը, Թարգ. Լ. Բաբայեանի 15 կ.
«Խելօք աքաղաղներ», Վ. Փափազեանի, 5 կ.
«Խոհք յուշկք», Պէրպէրեանի, ծախվում է յօգուտ Գալֆայեան աղջկանց որբանոցին Խասգիւղ, 1 ր.
«Նկարչի կեանքից» յիշողութ. Գ. Բաշինջ. 35 կ.
Шамшиньянъ, Элементарный курсъ черченія и переспективы, 60 к.
«Ինչպէս պահպանվել խոլերայից», 5 կ.
«Նոր պատկերազարդ աշխարհագրութիւն», բազմաթիւ քարտէզներով, Դ. Խաչկոնցի, 1 ր.

Դիմել՝ Книжный магазинъ "Гуттенбергъ" Дворцовая), Г. Галустяну. 1—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբերի 3-ին նշանակված Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու ծխականների ժողովը չը կայացաւ՝ նրանց $^{1}/_{5}$-րդ մասը ներկայ չը լինելու պատճառով։ Ուստի երկրորդ և վերջին անգամ հրաւիրվում են շնորհ բերել Վանքի եկեղեցին առաջիկայ կիրակի, հոկտեմբերի 10-ին, ժամը 12-ին։

Ժողովի զբաղմունքները լինելու են. 1) լսել հաշուատեսների զեկուցումը նախկին երէցփոխ պ. Բուդաղեանի $6^{1}/_{2}$ տարվայ եկեղեցական հաշիւների մասին. 2) հաստատել նախահաշիւը և 3) խորհրդակցել մի քանի հարցերի մասին։

Նախագահ ծխական ժողովի՝
Եղնիկ ա. ք. Երզնկեանց

(ո. շ. կ.) 2—3

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Ս. Ս. Աֆանասևանը

Գանձակից մշտապէս տեղափոխվել է բնակվում է Թիֆլիսում Վօզնեսենսկի փողոց Գալամքարօվի տուն № 9. (ա. օ.) 9—30

ԾԱԽՎՈՒՄ Է

մի տուն՝ իր գետնով միասին—306 քառակուսի սաժէն, ճակատը 16 սաժ., Կուկիայում, Ալէքսանդրօվսկի փողոց № 33. չ. շ. 6—10

Երդուեալ հաւատարմատարի օգնական

ՅՈՎՍԷՓ ՂՈՐՂԱՆԵԱՆԸ

Տեղափոխվեց Անաստասևսկայեա փողոց տուն Տարաիձէի։

(ո. շ. կ.) 2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԴԱ ՆԵԳՐԻԻ

II ՊՐԱԿ
Թարգմ. Յակոբ Յակոբեանի

Գինն է 30 կոպէկ

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ, Бебутовская ул. домъ № 43, Акопу Акопянъ. 1—3

Լոյս տեսաւ
«ԿԱՐԳ. ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ»
Դասագիրքը, հինգերորդ տպագրութեամբ
աշխ. Գիւտ ա. ք. Աղանեանի
Գինն է 50 կոպէկ։

Պահեստը գտնվում է Կենտրոնական գրավաճառանոցում։ շ. 1—10

Լոյս տեսաւ և ի ցոյց է դրված Կենտրոնական գրավաճառանոցում

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Իւղաներկ մեծադիր (96×68ս) պատկերը, տպված Լայպցիգի Պինկաու նշանաւոր գործարանում 14 գոյնով։

Հրատ. Գիւտ ա. ք. Աղանեանի

Գինն է առանց ճանապարհածախսի 3 ր.

Մինչև պատկերների ստացվելը բացված է բաժանորդագրութիւն։ Ցանկացողները այժմէն վճարում են 1 րուբլի, մնացեալը պատկերը ստանալիս։ չ. ո. 1—10

Ծախվում են

„ԹԱՌԵՐ"

ձեռնտու գներով, Թիֆլիսում, «ԹԻԼԻՊՈՒՃՈՒՐԻ» անուանված ասիական բուֆէտում։ (ա. օ.) 2—10

Լոյս տեսան
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
№ 5, 7, 8 գրքերը
№ 5—ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի

I Հատոր, երկրորդ տպագրութիւն, փոփոխած, լրացրած և էժանացրած
(Առաջին տպագրութիւնը 453 էջ էր և արժէր 1 ր. 50 կ., ներկայ հրատարակութիւնը 548 էջ է, աւելի մեծ ծաւալով և արժէ 1 ր. 20 կ.)։

Ճանապարհածախսով 1 ր. 40 կ.

Տասը հատ միանգամից գնողը ստանում է 10% զիջումն և ճանապարհածախս չէ վճարում։
№ 7—«ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ», Արշ. Մխիթարեանի, գինն է 40 կ.։
№ 8—«ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ», դրամա Իբսէնի, գինն է 50 կ.։
Այս երեք գրքերը միասին գնողը ճանապարհածախս չէ վճարում։

Դիմել Հանրամատչելի Գրադարանի խմբագիր-հրատարակիչ Հ. Առաքելեանին, Թիֆլիս, «Մշակի» խմբագրութիւն։

„ԷԺԱՆ ԵՒ ՍԻՐԵԼԻ"

կասէ ամեն մարդ, որ կը ստանայ հետևեալ 12 իրերը միայն 10 ր. 50 կոպէկով՝ ճանապարհածախսը հետը միասին։

1) Տղամարդու գրպանի ժամացոյց, սև ագռաւագոյն պողպատից, առանց բանալիքի լարվող, ոսկէ զարդերով։ 2) Զամշէ բսակ նիկկէլի փականքով ժամացոյցը փչանալուց պահպանելու համար։ 3) Ամերիքական ոսկուց շղթայ գրահագործ։ 4) Պարիզեան նուրբ բրելօկ։ 5) Տղամարդու մատանի 56 պր. ոսկուց, ակով, նուրբ գործ։ 6) Մաքուր և ամուր պորտ-պապիրոս (եթէ ուզեն՝ պորտ-տաբակ), կոշուց՝ արտասահմանեան գործ, կամ կաշուէ դրամապանակ՝ պատուիրողի կամքով։ 7) Կանանց գրպանի ժամացոյց, սև ագռաւագոյն պողպատից, առանց բանալիքի լարվող, ոսկէ զարդերով։ 8) Վզից կախելու երկար շղթայ ամերիքական ոսկուց։ 9) Կանանց մատանի 56 պրօբի ոսկուց, ակով, նուրբ գործ։ 10) Մի զոյգ նորաձև օձեր ակերով, նուրբ գործ։ 11) Իսկական անգլիական կաշուց նորաձև գօտի կանանց համար, պրեսժով. Րեգուլիատոր՝ արտասահմանեան գործ, կամ դրա փոխարէն զամշէ բսակ կանանց գօտուց կախելու համար։ 12) Գրպանի լաւ դանակ «Solingen», նուրբ գործ։ Նոյնպիսի ժամացոյց փակ տեսակը, բոլոր պարագաներով՝ 2 րուբլի թանգ արժէ։ Ժամացոյցն ուղարկվում է լարված—պատրաստ և 4 տարի երաշխաւորութեամբ։ Պահանջները կատարվում են անյապաղ՝ վերադիր վճարով, կարելի է և առանց գրաւականի։

Հասցէն. «Базаръ Роскоши», Варшава. 1-ая почтовая контора.

Գրագրութիւնը անվում է միայն ռուսերէն։ 8, 23 1—3

Ազգագրական-Հրատարակչական Ընկերութեան

Վարչութիւնը խնդրում է հայ հեղինակներին ուղարկել իրան իւրեանց աշխատութիւնները հրատարակելու, խոստանալով վարձատրութիւն տալ տպագրական թերթին 24—48 ր., որովհետև Ընկերութեան նպատակն է հրատարակել ինչպէս Ե. Լալայեանի «Ազգագրական Հանդէսը», նոյնպէս և գրքեր, գրքոյկներ, քարտէզներ և այլն։ Ընկերութեան բաժնեգինն է 50 ր. միանուագ կամ մաս մաս վճարելի։ Ընկերութեան բաժնետէրերն՝ձրի ստանում է Ընկերութեան բոլոր հրատարակութիւնները, որ այժմ հետևեալներն են. «Ազգագրական Հանդէսի» VII—VIII, IX, X ու XI գրքերը և Աւվերդեանի «Հայ-աշուղները»։ Ընկերութեան անդամ կարելի է գրվել Վարչութեան փոխ-նախագահ տ. Շ. Լալայեանի և գանձապահ պ. Յովսէփ Ամիրխանեանի մօտ։

Աշխատութիւնները և «Հանդէսի» բաժանորդագինը պիտի ուղարկել Խմբագրական-Մասնաժողովի նախագահ պ. Ե. Լալայեանին։

Վարչութեան նախագահ՝ Ա. Մէլիք-Ազարեան

(հ. շ.) 3—10



Պրօֆէսօր Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ

ԲՕՐՕ-ՆԱՑԹԱԼԱՆ

Նոր նիւթը

Կատարելապէս փչացնում է գլխի թեփը, ամրացնում է մազերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իր բնական ու հաստատ տեսքը։ Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրև ոչ մի վնասակար նիւթ չը պարունակող։

Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами Тифлисѣ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի դեղատներում և դեղավաճառատներում։

Արժէքն 1 րուբլի 25 կոպէկ։

(շ. 1 ամ.) 19—50

Дозволено цензурою. Тифлисъ, 8-го октября 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 15.